



ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 7 ՄԱՐՏ, 2011

### ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, տուր ինձ իմաստութիւն վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա վիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

### ՍԱՂՄՈՍ 119

ԱՍՏՈՒԾՈՅ ՕՐԷՆՔԻՆ ԱՐԳԱՐՈՒԹԻԻՆԸ

Արդար ես դուն, Տէր,  
դատաստաններդ ուղիղ են:  
Արդար պատուիրաններդ տուիր,  
որոնք ամբողջութեամբ նշմարիտ են:  
Պատուիրաններուդ նախանձախնդրութիւնը զիս կ'այրէ,  
երբ ոտիսներս կ'անտեսեն քո խօսքերդ:  
Խօսքերդ ընտիր են գերազանցօրէն,  
եւ ես՝ քո ծառայ, սիրեցի զանոնք:  
Թէպէտ նուաստացայ եւ արհամարհուեցայ,  
բայց հրահանգներդ բնաւ չմոռցայ:  
Արդարութիւնդ յաւիտեանական արդարութիւն է,  
Օրէնքդ՝ յաւիտեանապէս նշմարիտ:  
Նեղութիւն ու վիշտ եկան իմ գլխուս,  
եւ միակ բերկրանքս պատուէրներդ են:  
Յաւիտեանապէս արդար են պատուիրաններդ,  
իմաստնացուր զիս, որպէսզի կեանք ունենամ:  
Փառք, պատիւ եւ երկրպագութիւն քեզի,  
յաւիտեանէ մինչեւ յաւիտեանս: Ամէն:

### ՇԱՐԱԿԱՆ-ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:  
Ամենատուր Երրորդութիւն, տուր աշխաՀիս խաղաղութիւն:  
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:  
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղէրոց:  
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա,  
Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

### ԱՂՈԹՔ

Կ'աղաչեմք, ով Տէր,  
քո ամենօրհնեալ ներկայութեամբդ լեցուր մեզ այսօր,  
դուն՝ որ անսուտ հաւաստիքը տուիր մեզի,  
թէ ուր որ երկու կամ երեք հոգի քո անունովդ հաւաքուին՝  
դուն անոնց մէջ ներկայ պիտի ըլլաս:  
Արդ, ահա մեմք՝ երկնակոչ հօտիդ հողեղէն անդամները,  
ծարաւած ու լօթի հոգիով քո փարախդ եկած ենք՝  
միսիթարութիւն ու յագուրդ գտնելու:  
Մի՛ մերժեք մեզ, քո փոքրիկ հօտդ:  
Հովուէ՛ մեզ, Հովուապետ բարի,  
միսիթարէ՛, արբեցո՛ւր եւ զօրացո՛ւր մեզ,  
եւ միակ քո փարախիդ մէջ խմբելով միաւորէ՛,  
որպէսզի հաւատքի միութեան մէջ գտնենք  
մեր կատարեալ մէկութիւնը իրարու հետ,  
ինչպէս մեր մէկութիւնը՝ քո հետդ: Ամէն:

# ՕՐՈՒՄՆ ՆԻԻԹ

## ԱԲԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍԻ

Գլխ. 5 (Շար.)

Յարակեցնել էր սպանության հարցը, բարկության հետեւանքով: Նաեւ նախքան մեր ընծան ընծայելը Աստուծոյ գոհասեղանին հաշտուելու մեր նմանին հետ, որմէ կախում ունի նաեւ մեր կապը Աստուծոյ հետ:

Այժմ Քրիստոս կ'անցնի խօսելու եւ բացատրելու շնութեան եւ Ապահարզանի մասին:

Շնութեան մասին խօսած ժամանակ նաեւ պէք է անդրադառնալ ամուսնութեան մասին, ու անոր ճշգրիտ հասկացողութեան: Աստուծոյ պատուիրանն է. «Այրը պիտի ձգէ իր հայրն ու մայրը եւ կնոջ միանայ եւ երկուքը մէկ մարմին պիտի ըլլան»:

1. Առաձին միաոր կը կազմեն
2. Մէկ մարմին: Մէկութիւնը հոգեւոր մէկութիւն: Հակառակ անոնց փարբեր մտածողութիւն ունենալուն այդ մտածողութիւնը, խորհողութիւնն է որ ներքին գործող կապով մը պիտի մէկ ըլլայ:
3. Աստուծոյ կամքը ճանչնալ եւ այդ կամքին հաւատարիմ մնալ եւ հնազանդիլ
4. Հաւատարմութիւն իրարու նկատմամբ
5. Հնազանդութիւն իրարու նկատմամբ (Եփես 5)
6. Հնազանդութիւնն ու հաւատարմութիւնը երբեք ալ նուաստացում, փկարութիւն չի նշանակեր:
7. Շնութիւնը այդ անհաւատարմութեան խախտումն է
8. Ոեւէ մէկը որ իր կողակիցին փոխարէն կը փորձէ ուրիշ մը փնտրել, ուրիշի մասին խորհիլ, ուրիշի հետ կապ ունենալ ըլլայ հոգեկան կամ մարմնական արդէն իսկ շնած կ'ըլլայ իր սրտին մէջ
9. Նայիլ եւ ցանկալ
10. Ցանկութեան փեսակները: Կարելի է՞ չցանկալ:

Երբ ընդհանուր մակարդակի վրայ կ'առնենք բառը կը տեսնենք, որ Աստուած ինք մեր մէջ դրած է փարբեր փեսակի ցանկութիւններ, որոնք նաեւ անհրաժեշտ են մեր գոյութեան համար: Օրինակ, ուրբելու ցանկութիւնը: Նոյնպէս ամուսնութեան ցանկութիւնը, որ բնական է, որ մարդը կրնայ ունենալ հակառակ սեռին նկատմամբ:

Բայց պէք է զանազանութիւն մը դնել ցանկութեան փեսակներուն միջեւ: Երբ ոեւէ մէկ ցանկութիւն կը մնայ իր բնական սահմանումին մէջ օրինաւոր է, իսկ սահմանէն դուրս կը դառնայ անօրինական:

11. Բայց երբ մարդ ոչ միայն նայի, այլ նայելու հետ մէկտեղ այդ ցանկութեան փեղ փայ իր սրտին, իր մտքին մէջ, եւ կը սկսի զայն իբրեւ երազ մնայուն կերպով փայփայել, կը մնայ միայն առիթը եւ պատեհութիւնը, որպէսզի այդ ցանկութիւնը գործնականի վերածուի:

12. Գայթակղութեան պարագաներ:

- a. Աջ - Անձ - մեր խորհուրդները, մտածումները արմատախիլ ընելու
- b. Զեռք - Ընդհանր - մեզի մօտիկ անձեր, պարագաներ մեր կեանքէն արմատախիլ ընելու
- c. Ծրջապար - Այն վիճակները, որոնք մեր կեանքէն պէք է արմատախիլ ընել

13. Ապահարզանի պարագային: Բացի եթէ երբեք անհաւատարմութեան հարց կայ:

14. Հիլլալ եւ Շամմա Դարոցներու մեկնութիւնները:

- a. Հիլլալ շար աւելի ազատամիտ, որեւէ մէկ պարճառի կրնաս արձակել:
- b. Շամմայ միայն անհաւատարմութեան պարճառով կրնաս արձակել:

15. Մովսէս անոնց խստատրութեան պարճառով թոյլափրեց, որ կը նշանակէ հրահանգ չէ, այլ՝ արտօնութիւն: Հրահանգը բոլոր ժամանակներու համար, իսկ արտօնութիւնը՝ որոշ պարագայի:

16. Ով որ առանց պարճառի կ'արձակէ պարճառ կը դառնայ անոր շնութիւն ընելուն:

17. Ով որ արձակուածը կ'առնէ ան ալ շնութիւն ըրած կ'ըլլայ: Այս հատուածին բացատրութիւնը կախում ունի իր թէ որ բաժինը նկատի կ'առնենք Հին Կտակարանեան մտածողութիւնը, թէ մէկ այլ ուրիշ: Հին Կտակարանեան մտածողութեամբ կ'ըսէ, «Ով որ իր կինը կ'արձակէ առանց պարճառի, եւ նոյն այդ արձակողը դարձեալ կ'ուզէ վերադառնալ արձակուածին շնութիւն ըրած կ'ըլլայ»:

18. Քրիստոս երբեք չ'արգիլեր որ արձակուածը ամուսնանայ, այլ՝ ընդհակառակը թող որ իր օրինաւոր ամուսինը ունենայ, որպէսզի չարիքի պարճառ չըլլայ եւ այդ ձեռով անպարտեհութիւնները նուազին: